ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1.1

ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/146 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **18 նոյեմբերի 2026թ.**

2026թ. նոյեմբերի 18-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ մալուխի ձեռքբերման թիվ ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/146 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Լ. Մակարյան՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Էլեկտրամատակարարման» ծառայության պետ,

Ա. Յարալյան՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Էլեկտրամատակարարման» ծառայության պետի տեղակալ,

Ս. Իգիթյան՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Էլեկտրամատակարարման» ծառայության «Էլեկտրաէներգիայի հաշվառման և վերահսկման» խմբի առաջատար մասնագետ:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Լ. Մակարյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՒԾՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Լ. Հայրապետյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից և նիստին էլ մասնակցել են բոլոր երեք անդամները, հետևաբար Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով գեներացված փոփոխված հայտարարության և հրավերի տեքստերը հաստատելու մասին:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

1. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԵՆԵՐԱՑՎԱԾ ՓՈՓՈԽՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՏԵՔՍՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Լ. Հայրապետյանը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով գեներացված Ընթացակարգի փոփոխված հայտարարության, ինչպես նաև հրավերի տեքստերի նախագծերը.

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հաստատել էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով գեներացված Ընթացակարգի փոփոխված հայտարարության, ինչպես նաև հրավերի տեքստերի նախագծերը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԸ, ԺԱՄԸ ԵՎ ՎԱՅՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը նշանակել համապատասխանաբար Ընթացակարգի փոփոխված հրավերի և հայտարարության տեքստում նշված օրը և ժամը, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Լ. Մակարյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Յարալյան _____

Ս. Իգիթյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Լ. Հայրապետյան _____